

Խ. ՀՐԱՉԱՆ

ԶԿԱՐԹ ՅԵՐԳԵՐ

891.99

Հ-94



ԽԱԶԻԿ ՀՐԱԶՅԱՆ

891.99

Հ-94

այ

ԶՎԱՐԹ ՅԵՐԳԵՐ

ՊԵՏԶՐԱՏ

1938

ՅԵՐԵՎԱՆ

STOS MUL 117

6 NOV 2011

ԳՐՈՂԻ ՅԵՐԳԵՐ



JUN 2013

ՅԵՐԿՈՒ ՍՈՆԵՏ

1

Բարձրացավ նա մի որ, վորպես գրանիտե
Անսառան ու տոկուն, համառ մի կամք.
Բոլոր աշխարհներին մարտի կոչը նետեց,
Ու ձգվեցին հուժկու անթիվ մկան...

Հրդեհներում այն բոբը ու բոցերում շեկ
Պատկերվում եր նրա դեմքը համառ ու խիստ:
Մենք դեռ շատ կհիշենք, մենք դեռ շատ կհիշենք
Այն որերը հրե, ու բարկ, ու անհանգիստ...

Այն որերը ըմբոստ պայքարի ու յերգի,
Յերբ ցատումը մեր հորդ հոսեց փերից-փի
Յեվ տարածվեց անծիր յերկրներից-յերկիր.

Յերբ թշնամուն տիրեց մահվան սարոսփ,
Ու յերբ թնդաց յերկիրն ազատության յերգից.
Ո՛ր, լենինյան, ազատ, Խորհրդային յերկիր...

2

Յես հիշում են նրա մահը աշխարհացունց,
Վոր այրեց բլուր սրտեր, վորպես ելեկարույալ...

2126
39

Նա իր ժողովրդին սիրում եր և, անմար,
Իսկ թշնամուն ատում և խոհր և մահացուն...

Նա պայքարեց կյանքում ու պայքարեց արի,
Բյուր տանջանքներ կրեց, ու հալածանք, ու բանտ,
Ինչ վեր ունեւ կյանքում — տվեց դասակարգին,
Զխնայեց նրան իր բոցավառ կյանքն անգամ...

Յեվ դասակարգն իր սիրեց նրան անհուն,
Սիրեց առաջնորդին մայրական վառ խանդով
Ու բարձրացրեց նրան վերպետ մարտի անուն...

Նա պայքարեց վերպետ մի իրական դաճկո,
Վեր իր սիրտը տվեց պայքարներին հրին,
Լուսավորեց զալիք կյանքի պայծառ ուղին...

ՅԵՐԿ ԱՌԱՋ ՆՈՐԿԻՆ

Արեգակի պես կենսատու մի մեծ մարդու պայծառ
անուն
Վառում և մեզ հզոր բոցով, զեպի կյանք ու մարտ և
տանում:

*
* * *

Նոյեմբերյան մի առավոտ մենք ագմուկով աշխարհ
մտանք,
Մեր զալուստը վողջունեցին հրազենները դուռ ու
տար:
Դեռ վառողի ու ծխի մեջ ու արյունը գեմքին
սառած
Յերկիրը մեզ իր գիրկն առավ փայփայանքով,
թևատարած:
Յեվ յերկիրը մեզ մայր յեղավ, և յերկիրը մեզ
որորեց,
Ու թեկեցինք, վեր թեկեցինք, դարձանք պայծառ,
դարձանք զորեղ:

Արեն իջավ մեր ոբոցքին, ծունկի իջավ ու

զուրգուրեց

Յեւ սրսկեց իր կաթը մեզ, իր լույս կաթը՝ ջինջ ու

բյուրեղ:

Ձմրագնեց վնչ մի գիշեր մեր մանկության ցերեկը

լույս,

Կյանքը հոսեց ինչպես պայծառ շարժում, ինչպես բոբր

արշալույս:

Ու կաթի հետ մեր մայրական մեր հողու մեջ եր

ամբանում

Արեգակի պես կենսատու, մեծ մի մարդու անմար

անուն:

Մի մեծ անուն, վոր մեր կյանքը խնդով լցրեց,

դաճեց բյուրեղ,

Մանուկներին մեր խլրտուն սիրով իր մեծ՝ ջերմ

զուրգուրեց:

Այսօր հպարտ յերթի յելած փողոցներում արձակ

ու լույս,

Մեծ աչք մարդուն հն սեռոված մեր հայացքները

խոր ու լուրթ:

Մեզ հետ մեկտեղ յերկրագունդն է իր հայացքը

նրան հառել,

Ո՛վ մեր պայծառ հայրենիքում կյանքի ջահերն է

լույս վառել:

Արեգակի պես կենսատու Ստալինի պայծառ

անուն:

Այրում է մեզ հզոր բոցով, գեպի կյանք ու մարա

է տանում:

ՅԵՎ ԵՄԵՆԻ ՄԱՍԻՆ

... Ժողովն ազմկալից

Հուզմունքով է շնչում.

Ո՞վ է առաջ գալիս,

Այդ սլոմ ձայնն է հնչում...

Խնդությունն է թեւում

Գլուխներից վերե,

Ի՞նչն է այդպես դերել

Աչքերն այդ սեվեռուն...

Բանվորական դեմքեր,

Ձեռքեր կոշտ ու կոպիտ,

Ու խնդության գետեր,

Ու սրտաբաց ժպիտ:

Յեւով բեմի վրա

Մի կոմյերիտ ջահել —

Դեմքին խոհեր հրակ,

Աչքերի մեջ ջահեր:

— Տղերք, — մեծ յեռանդով
Խոսեց նա — դէհ, լոհք,
Մենք մեր բրիգադով
Այստեղ վերջեցել ենք
Մեր պլանն այս տարվա
Կենսագործել լրիվ,

Տալ գերակատարում, —
Ե՛յ, քարտուղար, դրի՛ր.
Տալ գերակատարում
Քսանհինդ տոկոսի,
Վոր յերկրի յերակներում
Խնդությունը հոսի...
Խնդությունը հոսի
Մինչ Սիրիւր և Ուրալ,
Վանց հաղթության «ուռա» —
Հաղթանակից խոսի...

Ծափերի մի վորոտ
Պայթեց հանկարծակի,
Մի պատասխան, վորով
Դարձան համակարծիք
Բանվորները բոլոր
Կոմսոմոլիտս Սեթին:

Աչքերի մեջ ժպիտ,
Ու դգվանք, ու կորով,
Կանգնեց բեմի վրա
Վարպետ, ծեր պապաշան.
Ձեռքը վերե տարավ
Գլխարկը ցած քաշեց...

Լոկո մի պահ... Հետո
Ձեռքը նորից տարավ
Յեվ գլխարկը մեպտով
Ու թափով ցած առավ...

— Տղերք... (ձայնը խոր եր...) —
Նորից ասաց. — տղերք,
Հիմա ինձ թույլ տվեք
Մի քանի խոսք, վորով
Ուղում եմ յես Սեթին
Պատասխանել հիմա ..

Յես տարիներ առաջ
Տեսել եմ քաղց ու մահ,
Անթիվ գնդակներ եմ
Կրել մարմնիս վրա,
Շատ մութ հուշեր ունեմ
Ուղեղումս գրած...

Յես կռվել եմ դաժան
Են մարտերում, վորոնք
Այդպապը յեղան
Այս սրերի... Նրանք,
Ովքեր պայքարել են
Այն սրերում քաղցի՝
Գիտեն — առանց հացի
Կռվել, ու քայլել ենք
Շարաթներ ու սրեր...

Մենք թողել ենք հետեղ,
Կռվի դաշտում անթաղ
Լավ ընկերներ, վորոնք

Պայքարներում այն թեժ
Ձեն վհատվել յերբեք...
Կովի յերգ են յերգել
Անդամ մահվան ժամին,

Ու տարել և քամին
Ձայնը նրանց յերգի
Յերկրներից յերկիր,
Ու վառել և հեռվում
Պայքարների հրդեհ,
Վոտրի հանել կովի
Բյուր, անհամար գնդեր...

Յեմ ընկել են նրանք
Հաստատ մի հավատով,
Վոր մենք չենք վհատվի,
Վոր մենք կլինենք հաղթող...

Յեմ հաղթեցինք իրոք,
Մենք հաղթեցինք արյամբ...
Հիմա նրանք, վորոնք
Ուզում են մեր արյան
Հորդ գետերը նորից
Տեսնել ալ-հոսելիս,
Մի տեսարան, վորից
Քրքջում են նրանք...

Մենք կարճակենք անշուշտ
Մեր գնդակը հատու,
Վոր թեժ և անվարան,
Վարժ և ու մահացու...

.....
.....

Վորպես նրանց նյութած
Դավերին պատասխան,
Յես նետում եմ անա
Իմ այս պատասխանը...

Մեր Սեթը ջահել և,
Հասակին և թոռիս,
Ու յես թույլ տամ նա ել,
Վոր նա ել ինձ դռի՝
Ամթ և ինձ համար
Ու իմ բրիգադին...
Յես իմ բրիգադով
Սոցմրցման եմ կանչում
Սեթի բրիգադին...

Մեր պլանն այս տարվա
Կենսագործել լրիվ.
Տալ գերակատարում,—
Ե՛յ, քարտուղար, գրիր՝
Տալ գերակատարում
Յերսուն հինգ տոկոսի,
Վոր յերկրի յերակներում
Խնդությունը հոսի...
Մինչ Սիրիը և Ուբալ,
Վոնց հաղթության տուտա՝
Հաղթանակից խոսի...

Թո՛ւ իմանան նրանք—
Վոհմակը ֆաշիստական՝
Ամրանում ենք ու կանք
Ու կլ չենք, վորքան
Ղեկավարն և մեր մեծ

91 96
39

Այս լեռնայան դարձի
Վե-հա-Պե-Ռեն անշեզ,
Յեզ Մտալիւնը մեծ...

.
-

Ս Ս Է Մ Ա Ն Ա Պ Ա Է

Աչքերի լուսարձակն ե մթությունը կիսում
Յեզ ուշադիր դիտում ամեն մի թուփ,
Փնտրում կասկածանքով,
Կրկին առաջ հոսում,
Պրպտում ե ասես ջրի կոհակներում
Կասկածելի մի բան,
Թույլ մի շշուկ:

Յեզ նա, այդ գինվորը, դիտում ե աներեր.
Վորսում խորհրդավոր ամեն փսփսուկ...
Ո՛ր, նա շատ լավ գիտե տարբերել ձայները՝
Վննց ե հոսում ջուրը,
Բամին վննց փսփսում...

Նրա ականջները շատ զգայուն են —
Տարբերելու համար յեղեգի շրջյունը
Ալիքների ձայնից՝ խուլ, վշվշան...

Սե, ահռելի մի կետ, վորպես նշան
Գիշերվա թանաքե յերեսին սե
Յերևում ե անձե ու անորոշ.

Նա տեսել է այդ կետը լույս որով,
Այնտեղ մի անթափանց մասրենի յե տեսել...

Իբր շուրջը բամբակի արտերն են փռվել,
Իբր շուրջը, մթան մեջ, բամբակն աճում է.
Պետք է խաղաղ պահին անգամ կռվել՝
Ամուր պահպանելու նվաճումը:

Լռության մեջ ահա բամբակն աճում է,
Իսկ շուրջն ամենուր բամբակի արտերն են.
Ակնթարթն անգամ հիմա մեծ նվաճում է,
Թող արագ սլանան ակնթարթները:

Շուրջը տարածվում յերկիրը իր,
Տարածվում է հազար-հազար վերստեր.
Տարածվում է հեռու, անծայրածիր,
Մինչև Մուրմանսկ հեռու,
Վլադիվստոկ...

Այնտեղ, արևելյան այն սահմանում,
Հենց այս ժամին մի այլ, մի այլ սահմանապահ
Հանգիստ կեցած տեղում —
Շուրջն է դիտում,
Վոր թշնամին չանցնի սահմանն հանկարծ:

Մթան մեջ նրա աչքերը փայլում են,
Հետո մի ժպիտ է բացվում դեմքին.
Բարձրանում է տեղից,
Հանգիստ քայլում է

Առաջ ու յետ:
Ասես շշնջումով ներքին
Փսփսում է կամայ
Ու ինքն իրեն.

— Ե՛, հեռու իմ ընկեր,
Ձգաստ հակիր,
Վոր թշնամին հանկարծ սահմանը չբմանի,
Իսկ յես հետևում եմ
Ինձ հանձնված դիրքին:

Յես անչափ հպարտ եմ,
Վոր այստեղ, իմ դիրքում,
Պաշտպանում եմ յերկրիս հանդստությունը:
Մեր թշնամին իրեն անհանգիստ է զգում
Յեվ հավեր է նյութում,
Բայց դա ապարդյուն է:

Մենք պաշտպանում ենք մեր սահմանները,
Մեզ համար հանգիստը հիմա շատ թանկ է,
Բայց յեթե թշնամին իր «թելը մանել» է,
Մենք չենք զլանա վերջին զնդակը.

• • • • •
• • • • •

Աչքերի լուսարձակն է մթությունը կիսում
Յեվ ուշադիր դիտում ամեն մի թուփ
Փնտրում կասկածանքով,
Կրկին առաջ հոսում,
Պրպրտում է ասես ջրի կոհակներում
Կասկածելի մի բան,
Թույլ մի շշուկ...

Դեմը գետն է.
Հանգարտ զալարվում են
Ալիքները նրա ու խշխշում...

ՅԵՍ ՄԻՆՏՑ ՇԵՐԱԶԵԼ, ԵՄ...

Յես միշտ յերազել եմ այս որն ու այս տարին...
Յեվ նա թվացել է ինձ անհաս ու հեռու,
ինչպես տափաստանը լեռան կատարից,
Վոր յերկնքի լազուր բարձունքներն է քերում:

Յեվ նա, անս, յեկավ...

Զինվոր եմ յես,

Կարմիր գինվոր, յերկրիս պահակը արթուն...

Կերեմ այդ կոչումը հպարտ ու վես

Յեվ ուսուցման պահին, և գալիք մարտում:

ՄՏԵՐՄԱԿԱՆ ԽՈՍՐԵՐ

1

Իմ ձի, իմ լնվ Սեվուկ, հավատարիմ
Իմ լնվ ընկեր, յեղիր կայտառ, առույգ.
Դու հիշում ես, անշուշտ, այն թեժ տարին,
Յերբ վառողի բոցն եր ոգը վառում...

Յերբ մարտական խինդով ու անվարան
Թռչում էջինք մեկտեղ կրակի մեջ...

Ե՛, հաղթությունը մեր, մարտը վարած
Խիստ դժվար է հիշել, թվել մեկ-մեկ:

2

Իմ ձի, իմ լնվ Սեվուկ, հավատարիմ
Իմ լնվ ընկեր, յեղիր կայտառ, առույգ,
Տես, թշնամին մահվան պատրույգներն է վառում,
Մեր սրբազան պաշտքը թնդ կատարենք...

Թող վոր յեկնենք վերջին, վերջին հնձի
Ատելությամբ խորին, խնդուն յերգով,
Վոր յերկիրը յերգի մեզ վառք ու գովք,
Հավատարիմ Սեվուկ իմ, ընկեր իմ, ձի...

ՀՐԱՓԵՇՏԻ ՊԱՆԷ

Յերբ շեփորն ե զվարթ թնդում —

— Ձիերը հեծիր,

Թող շողշողա քո դեմ խնդուն

Ճանապարհն անծիր

Մոռենում եմ մորս այդ պահին՝

Ջերմ խոսքեր տանմ,

Բայց նա, — «Տղան, քեզ լավ պահիր,

Իսկ յես կսպասեմ...

Կսպասեմ քեզ հույսով, անկայ,

Ականջս ձենի.

Թե թշնամուն չտաս խնդով՝

Սերս քեզ լինի...

Իսկ թե նրան հանդիպելիս

Ձեռքերդ դողան,

Ե՛լ չդառնաս այս տունը հին,

Ու մորդ թողած...»

— Ա՛խ, սիրելի, սիրելի մայր,

Հանգիստ մնա դու.

Հայրենիքիս փառքի համար

Կկանգնեմ արթուն...

Սլանում են ձիերը մեր

Ի դող թշնամու...

Լռություն ե, ստեպ, գիշեր.

Գիշեր՝ զոյժ ու մութ...

ԶԱՊԱՅԵՎ

1

Յերբ մթնում ե շուրջդ և գիշերի միջից,
Ինչպես դարձող կինո ժապավենը,
Իր հայացքով այնքան լուսաշող ու վճիռ
Քեզ ե նայում ինքը՝ Չապայեվը,

Յերբ իր մարտիկներին խրախույս ե կարգում —
Կամ յերբ խոսում գալիք կյանքի մասին
Իր հավատքով հաստատ և սիրով իր ազնիվ,
Հպարտությամբ անափ լցվում ես դու...

Յեվ սիրում ես կյանքը շատ ավելի կրքոտ,
Լցվում արիության անծայրածիր,
Ինչպես ամենօրյա աշխատանքը քո,
Ինչպես ներկան մեր այս վեհ, անձանձիր...

2

Վերջին, վերջին անգամ նա՝ մարդ ու հերոս,
Սուզվեց գետի խաղաղ ալիքներում.
Ճեղքելով ջուրը պիրկ թևերով,
Հայացքը միշտ դեպի հեռու-հեռուն...

Հստակ այդ հայացքն ու սիրտը հա՛ջ բարախուն,
Այդ անհանգիստ մարդը՝ պայծառ կրակ,
Ինչպես գիտեր ատել, սիրել ինչպես հախուռն,
Ինչպես մեռավ, վորպես հերոս ու մարդ...

... Յեվ ո՞վ, ո՞վ չի ցանկա յերկրում մեր անպարփակ —
Յերեվանից մինչև Խաղաղական,
Մեռնել անհառաչանք, յերկրիս փառքով արքած,
Չապայեվի նման՝ հաստատակամ:

*
* * *

Ո՛ր, յես հիշում եմ ղեռ փայլը քո աչքերի,
Վոր վառվում եր այնպես մարտի պահին...
Ա՛խ, կասկածանք ու վախ սրտից հանիր,
Խոյացումի, վազքի ճանապարհին...

Ամեն մեկի սրտում մարտի պահին
Հարկավոր է մի քիչ... ուժանորդ.
Դու ուղեղդ ընդմիշտ զգաստ պահիր,
Քերթի սրտիդ նստած կասկածանքի տիղմը:

Յեվ թող մաքիդ պայծառ ալիքները
Հեռաստաններ կտրեն խիզախորեն
Ու սլանան հուժկու... զալիքն ել ե
Մեզ մոտենում վորպես հասունացող ցուրեն:

...Ո՛ր, յես հիշում եմ ղեռ փայլը քո աչքերի,
Վոր վառվում եր այնպես մարտի պահին.
Ա՛խ, կասկածանք ու վախ սրտից հանիր
Խոյացումի, վազքի ճանապարհին...

ՅԵՐԳԵՐ

Բացվում ե որը-յերգեհոն՝
 Աշխատանքով ու քրտինքով.
 Մտեղծագործ լարմամբ, ճիգով
 Բացվում ե որը-յերգեհոն.

Ու քեզ մոտիկ, քեզնից հեռու,
 Գործարանում, դաշտում, հանքում,
 Յեւած այս նոր աշխատանքում
 Նոր ուժեր են հուզվում, յեռում:

Բացվում ե որը-յերգեհոն՝
 Աշխատանքով, հույզերով բարի.
 — Յէլ, հույզերիդ հեյդերը զաթի,
 Զուլվիր նրան քո յերգերով:

ՅԵՐԳԻ ԻՄ ՄԱՆՍԻՆ

Արթնանում եմ քնից առավոտը վեցին,
Պատիս ժամացույցն ասում է ինձ,— վեր կաց...
Բացում եմ լուսամուտը և մեկնն ինձ
Վողջունում է զրսից մեր շողշողունն ներկան:

Նա լցվում է իմ մեջ, համակում ինձ,
Հոսում յերակներով բարկ, սրընթաց.
Ու դառնում է յեռանդ, ու դառնում է խինդ:
Ու դառնում է նա կամք, դառնում ընթացք:

Յես հպարտ քայլով մտնում եմ գործարան
Յեմ աղմուկը ծանոթ ականջս եւ շոյում...
Շուրջս աղմկում է լեցուն մի կյանք,
Լեցուն հոգսերով խոր և իմաստուն...

Յեմ ան, վոր կապում է նրա հետ ինձ,
Յեմ ան, վոր այդ կյանքում անհրաժեշտ եմ,—
Լցնում է իմ սիրտը հպարտությամբ ջինջ,
Տալիս է իմ ձայնին առույգ շեշտեր:
Գիտե՞ք, յես զգում եմ ինձ ավելի մեծ,
Շատ ավելի հասուն, խելացի մարդ,
Վոր զիտե, թե ինքը պատասխանատու յե,
Պատասխանատու՝ մեր վաղվա համար:

Յեմ յեռանդի, ուժի մի լեռնացած ալիք
Շառաչում է սրտումս, նետում ինձ վեր...
— Ա՛խ, սատանան տանի, ինչո՞ւ միանգամից
Բանվոր ու ինժեներ, մեխանիկ չեմ ծնվել...

Յեմ ուզում եմ ամբողջ գործարանը մեկնն
Առնել ձեռքերիս մեջ, շարժել, շարժի գցել,
Վորպեսզի գլաններն արագ յերթնվեցեն,
Վորպեսզի թվերը վեր մագլցեն...

— Գիտե՞ք, մեր պաշտարի այս որերում թեժ
Մարտ է մտել ջահել, մի պողպատե սերունդ,
Վորն ունի պիրի մկան, բարախող մի սիրտ,
Գլխում՝ զգաստ ուղեղ և ուժ իր ուսերում:

Նա հիմա շատ լուրջ է ու շատ հասուն
Յեմ մղում է մարտեր վճռական ու համառ.
Ու զիտե շատ հոտակ, վոր ինքն անշուշտ
Պատասխանատու յե վաղվա համար...

ԼԻՐԻԿԱԿԱՆ.

Յեա այսօր կրկին գգացի
Առավոտի բույրերը.
Սենյակիս մոտիկ զրացի
Վարդենին բուրում եր:

Իսկ գիտե՞ք ինչքան ե լավ
Հանգիստ քնից հետո,
Յերբ պիտի գործի գնաս,
Զգալ առավոտը...

Զգիտեմ ինչպես եք դուք
Զգում այդ բանը.
Իսկ ինձ զալով՝ ազնիվ խոսք,
Վոնց հանգստի տանը...

Ու յերբ առույգ անցնում եմ
Վարդենու մոտից,
Փռնիկապուրջամբ հարցնում եմ.
— Բարե՛վ, վոնց ես, զրկից...

Պատասխանի փոխարեն ինձ
Պարզում ե նա բացված
Իր վարդերի կարմիր փնջից
Մի հատիկ վարդ:

Բողոնում եմ այդ նվերը,
Քնում գործարան.
— Դիտե՛ք, վարդն ել ե արթնացնում
Պյանքի, գործի ծառավ...

ԹԵՎԱՎՈՐ ՅԵՐԴ

Բացվում ե մի պայծառ լուսաբաց,

Լեռներից սվավում ե քամին.

Կուղեյի յես հիմա մի բարձր,

Մի խնդուն յերգ լսել, վոր քաղցր

Կարկաչեր ոգում այս ժամին...

... Ո՛ր, յերգ դու, հ, յերգ, վեր հանիր

Ջահելությունն իմ ջինջ ու պայծառ...

Անցնում եմ լեռներով վահանիւտ,

Դաշտերով ծաղկաշատ ու արծաթ.

Ահա տափաստաններն անեղերք,

Ահա լեռնապարը կապույտ,

Այգեստաններն ահա բազմաբերք

Տարածված, վտլորուն, ինչպես յերգ...

Հանդիստ եմ շնչում յես ու աստույգ

Միջոտ գարկում ե անաղետ,

Սիրում եմ յես մարգեր ու աստու,

Աղջիկներ, վոր շնչում են զարթուն.

Լեռների կանաչ սեղ ու բաղնիկ...

Սիրում եմ յես թեղերս բանալ,
Պողպատե, շողշողուն, լայն թեղեր,
Ենպիսի վեր, զեպ յերկինք ալանալ,
Արեւից, աստղերից ել գեռ վեր...

Սիրում եմ յես բարձրից դիտել
Հայրենի յերկիրն իմ հարազատ,
Բաղաբները նրա դրանիտե,
Դյուղերը լուսավոր ու ազատ:

... Իմ հզոր, թեւավոր հայրենիք,
Հայրենիք իմ լույս ու պայծառ,
Սիրում եմ քո բույրը հայրենի,
Բա՛շտնջը հարազատ ու արձակ:

Դու մեր կյանք, դու մեզ սնող մայր,
Պտեղնած ենք սահմանին քո ամուր,
Յեղ ամեն թիղ հողիդ համար
Պատրաստ ենք մոխրացնել թշնամուն...

ՄԵՐԵՆԱԴ

Ի՞նչն հուզեց ինձ հանկաքձ:

Յերբ դու դուռը բացիր.

Հոգն այս թեատարած,

Վոր դալիս ե բացից,

Թե՞ ծիծաղը քո լույս,

Առավոտի պես այս,

Վոր այնքանն ե անհուն

Յեվ այնքանն ե պարզ...

Հիմա զբոսում դարուն,

Բերկրանք ե ու ծիծաղ.

Մեղուներն են աբրում

Բաժակներում պայծառ:

Այդում կեռասենին

Մաղում ե լույս թերթեր...

Դու կանչնած մեր սեմին՝

Ծիծաղում ես թեթև:

Առավոտն ե լուսե

Դեմքիդ գույներ ցանում:

Դու իմ անդին, իմ սեր,
Իմ անմոռաց անուն...

«Ա՛խ, կարող եմ մի ուր
Հանկարծ յես խենթանալ,
Մինչև լեզուս մոլոր
Քո դեմ սիրտս բանա»...

Մի գրող ե ասել,
Ընկել-մեռել հետո,
Յերգն այդ մեզ ե հասել
Ինչ վոր արահետով...

Բայց յես սիրում եմ քեզ,
Վնչ «ախ», ու վոչ թանաք.
Յեվ հարկավոր չե ինձ
Քո դեմ սիրտս բանալ:

Քեզ հետ մենք միասին
Կիսեցինք զործ, հանգիստ.
Խոսեցին մեր մասին
Ու մեր աշխատանքի:

Յերզը թնդաց արձակ,
Ինքնարուզիս ե ազատ.
Աշխատանքը դարձավ
Կյանք ու յերգ հարազատ...

Աշխատանքը դարձավ
Յերգ, իսկ յերզը — կրակ...
Յեվ մենք զոհ, համարձակ
Ընդունեցինք նրան...

Հենց այդ եր՛ինձ հուզեց,
Յերբ դու դուռը բացիր,
Հոջն այս թևատարած,
Վոր գալիս է բացից,

Ու ծիծաղը քո լույս
Առաջնորդի պես այս,
Վոր այնքան է անհուն
Յեկ այնքան է պարզ...

ԱՌԱՋԻՆ ԶՅՈՒՆԷ

Այս յերեկո նստեց ձյունն առաջին,
Անհունորեն սպիտակ, դարձանալի փափուկ...
Արագ դուռը բացիր... և հայացքում քո ջինջ
Մտերմություն կար մեղմ և խնդության կապույտ...

Յերեկոն եր իջնում վորպես դու — մշուշ — կաթ,
Իսկ ձյունն հանդարտորեն ու քնքշարար մանուկ...
Ներսում հրաշալի մի յեղանակ չերդած
Որորում եր սղում գալիք լույս մի մանուկ...

ՅԵՐԳՒ ԱՇԵԱՆ

Չի՛ յեղել յերբեք այսքան շռայլ
Աշունը բերքով ու ծիծաղով.
Այսքան մրդեր, ա, վոսկեշառայլ,
Այսքան ջինջ յերգեր, այսքան խաղող...

Աշունը բերքով ու ծիծաղով
Բացեց զիրկն անծայր իր կարոտի.
Թուխ աղջիկները մթնշաղով
Համբույրն գդացին առավոտի:

Այս առատութունն արեգնաբույր
Յերբ ե յերազել մարդը հողի:
Ո՛ր, առավոտներ՝ յերգի պես ձուլի,
Նա հիմա ինչ յերգ ձեզ ներբողի:

Չուլալ յերգեր ու հակինթ խաղող.
Հայրենիք իմ բոլր ու անմայլ.
Չի՛ յեղել յերբեք այսքան շռայլ
Աշունդ բերքով ու ծիծաղով:

ԱՇՈՒՆ

Աշուն, նայեցիր իմ լուսամուտից
Պայծառ քո հայացքով,
Ահա դուրս եմ գալիս դաշտ, վոր մոտից
Ձգամ հմայքը քո:

Այգիներն են փովել վոսկեհանդերձ,
Ինչպես յերգի ընթացք...
Ինչքան սաթ վոխկույզներ, ու ինչքան դեղձ,
Քանի՛ լեցուն հնձան...

Այգիներում արբշիռ ու բաղմաբերք
Քանի՛, քանի՛ խմբեր,
Վար վառում են հույզի, խնդության յերգ,
Վոր վառում են սեր:

Յերգը, սեպտեմբերյան յերգը զուլալ,
Մեղքի պես ծորուն,
Վար ձգվում ե, ինչպես քուլա-քուլա
Ծախը կապույտ ձորում:

Ֆեղ գետակը՝ արծաթ ալիքներով,
Քչքչան ու գիծ,

Վոր տանում ե յերգն իր ջինջ ու գերոզ
Դեպի մարդ ու այգի:

Աշուն, խայտանկար քո գույները բազում,
Մշուշները կաթե,

Ցերեկները ամպոտ, գիշերները լազուր
Ու անձրևը թել-թել

Յես սիրում եմ անչափ... Ահա նորեն
Քո հմայքն եմ զգում...

Աշուն, առատության շտեմարան,
Հիություն դու զնգուն...

ՅԵՐԳ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս առավոտ հայրենիքիս աղջիկները թուխ,
Աշխատանքի իմ ընկերներն ու քույրերը,
Սրտերում մեր լեռների կապույտներն անթուխ,
Յեվ սրտերում այս առավոտի բույրերը.

Այս առավոտ իմ յերկրիս աղջիկները վաշտ առ վաշտ,
Հայրենիքիս մշտարթուն բանականների պես,
Դաշտ յեկան նորից, ու համերաշխ եր դաշտը,
Նրանց յերթին այդ խնդուն, փառավոր ու վես...

Յեվ առավոտի մեջ այս հորդեց նրանց ծիծաղը,
Ինչպես մեր սեզ լեռներից վազող ջրերը սրընթաց,
Փռվեց վորթատունկերին առավոտվա շնչով պաղ,
Յեվ վոխկույզները սե-սաթ որորվեցին արբած...

Ո՛ր, այդ ծիծաղը զնգուն, վոր տարածվեց հանկարծ
Արևելք ու արևմուտք ե հաքավ, հյուսիս,
Հետո իջավ, իջավ ցած, վոխկույզների մեջ հանդավ,
Ինչպես խավար գիշերում մարած բոցը լույսի...

Այդ ծիծաղի հետ մեկտեղ մեր այգեստաններին,
Վոխկույզներին սե-սաթ, խլրտուն մանկանց նման,

Յեվ դաշտերին մեր արձակ, աներիզ,
Վարոնք այնքան բերքեր ունեն, այնքան հմայք,

Նստեց, արդ, հաստատուն, անկապտելի հույզով վաղազ
Խնդություն մի, ո՛ր, վաղուց, վաղուց սպասված...

Այս առավոտ խնդությամբ ու ծիծաղով
Յերկրիս աղջիկները դաշտ յեկան...

ՅԵՐԴ ԱՌԱՏՈՒԹՅԱՆ

Այս գիշեր յերկիրը յերկնքի զառ կապույտով արթած
Յեվ նախանձով լցված յերկնքի դեմ՝
Ներծծեց աստղերը, և նրանք ծորալով իջան ցած,
Յերբ բացվում էյին որվա մարգարտե դռները արդեն...

Յեվ յերբ արևը, դաշտերի բուրմունքից արթած,
Իր շողերը փռեց լեռներին, հովիտներին արձակ,
Աստղերը վարից ժպտացին, ժպտացին զվարթ, սրտաբաց,
Աստղերը, վոր յերկրի վրա ավելի պայծառ 'դարձան:

Յեվ արծաթ աստղերի մեջ իմ յերկրի աղջիկները թուխ,
Թուխ դեմքերին իրենց խնդություն ու կարոտ,
Ու ծիրանե շուրթերին յերգերը սրտաբուղիս,
Գործում էյին՝ խինդն իրենց պահել անկարող:

Գործում էյին, յերգում... Յերգում էյանքի մասին,
Մտալինի մասին — Մեծ Առաջնորդ,
Միրո մասին, մեր ազատ Հայրենիքի մասին, —
Յեվ յերգը հոսում էր զվարթ ու լուսահորդ...

Յեվ յերգը հոսում էր, աճում ու ամրանում,
Դառնում ուրախության ձիչ անպարփակ.
Ու հնչում էր հուժկու. — մեր թանգազին անուն,
Մեր Առաջնորդ, մեր հայր, քեզ կյանք ու փառք:

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՑ

Այս առաջնութեան տեղացի,
Հստակ, ինչպէս տղամանդ,
Անձրե տեղացի՝ յերկր չեղած,
Պայծառացան սար ու հանդ:
Սփականքին բարտինները,
Յեղ ամպերը ծափեցին,
Զուրը իջան թուխ բազերը,
Բազերը թուխ, յերգեցիկ:
Առունները քչքչացին,
Արագիւններն իջան ցած,
Կռուկները թռան անծիր
Կապույտներով՝ ու անցան:
Յատկոտեցին կայտառորեն
Դառն ու մաքին արտում,
Շորորացին արտում լորեր,
Մոտիկ յերգեց մի արտում:
Մեզմ որորվեց խնձորենին,
Սիւլ փաթիլներ տեղաց վար...

Յեղնիկն անցավ լույս ձորերից —
Մի թուխ աղջիկ՝ շուրթը վարդ...
Գողնոցումը հաց եր տանում,
Սրտում՝ կարտ ու յերկինք...
Առաջնութեան չեղ կշտանում
Նրա հրաշք — հուր տեսքից:
Այնտեղ, գաշտի բաց կապույտում,
Աշխատում եր մի տղա,
Հետն ել ուրախ յերգ եր յերգում,
Սիրտը զարկում, վոնց ծնծղա:
Թերթում եր նա յերկրի գիւղը,
Մարգարիտներ ճակատին.
Լողանում եր լուրթ յերկինքը
Նրա աչքերում հակինթ:
Աշխատում եր և սպասում
Իր սիրած այն աղջկան:
Սիրտը ցնծում, յերգ եր ատում —
Ահա, ահա նա կգա...
Փայլեց ճամբի նեղ վոլորտից
Դիւաշուրը նրա բաց.
Տղան տեսավ, և կարտուց
Սիրտը ճիւղ ու մնաց...
Վորտացին ամպերն հեղում,
Յեղ գաշտերի վրա ջինջ
Հույզի անձրե տեղաց անուշ,
Հույզի անձրեն առաջին...

ԱՇԽԱՏԱՅԻՆ ՅՈՐԻ.

Յեւ սիրում եմ աշունը մրգառատ ու զեղձան,
Յերբ յերկիրը հազնում է վոսկե շորեր,
Յերբ հուզմունքից յեռում են յերգ ու հնձան,
Որերը դառնում են զարմանալիսրեն:

Աղջիկներն յերբ պայծառաչ ու թխաղեմ
Քրքջում են, փայլեցնում առամիները սառափ,
Յեվ բիլ գիշերներին արծաթ առաղերի զեմ
Համբուրվում են լուսնի շողերի տակ...

Սիրում եմ վոշխարի մայունն ու մանուկների ճիչերը,
Բարտինները ճամբեղրի, վոր նստում են հանդարտ,
Մայրամուտի արեն ու առվի խիճերը,
Վոր բեկբեկվում են հաղարեբանգ...

Յեվ կապույտ գիշերը, յերբ աղմուկներն են լուում,
Յերբ լուսթյան մեջ ծորում է սալերի ճոխնչը,
Արծաթ շողերի տակ գլգլում է առուն,
Յեվ այնքան բաղցր է աշխատավորի նինչը...

Սիրում եմ այգիների առատահոս բերքը,
Շիկնած գեղձերը և խաղողները հակինթ,

Դաշտերով մեկ փովող սեպականերյան յերգը,
Լիության սեղ հարսը՝ վոսկե քողը հաղին...

Ու մեղմորեն թափվող աշնան անձրևիլը ցուբա,
Մշուշները կաթե, դաշտերը գորշ ու թաց,
Հարսանիքներն անզուսպ, վոր իրար դեմ մրցում,
Ընթանում են հախուռն... լիությունը՝ չերգված,
Մառանների յերգը և հացը՝ լույսը — փրփուր...

... Յեվ ահա նա, մարդն այն միհ ու ստեղծարար,
Վոր դաշտերին այս ջինջ սերն է մազում իր բարկ,
Յեվ աչքերում այնքան պայծառ կյանքի ծարավ՝
Ստեղծում է կյանքն այս լուսավոր ու հստակ...

Փնփռ քեզ, մարդ իմաստուն, հողի աշխատավոր,
Համայնական դաշտերի դու իսկական հերոս,
Վոր կերտեցիր անհուն խնդությամբ ու ցավով
Կյանքն այս լայնհորիզոն, խնդածիծաղ, դերող...

* * *

Աշնանային արեւ, մեղրի շտեմարտն:
Առատութեան վռակէ սափոր —
Շաղկիր զուրգուրանքդ ստեղծարար
Քամու մեղմ սոսափով
Հատիկներին, փորոնք լուռ ննջում են հոգում
Խինդով դարձնանային,
Վորոնց վրա այգը ժարգարիտ է ցոլում
Զուլալ ու հմայիչ...

Յերբ զարուհը բացվի կաքամիների կանչով,
Յերգով արտաւանների,
Ու լեռ-հովիտ ծաղկեն զմրուխտ-վառ կանաչով
Արձանի ու աներիդ,
Նրանք վեր կթեհեն... (պայծառ ծխարձակում)
Մոռիկ քո ջերմ ծոցին,
Քեզ գրկելու համար... ան, հույզերիդ հովտում
Նրանց սիրով ոծիր...

ԴՈՒ ՓԱԽԱՐ ԻՄ ՄՈՏՈՎ

Դու փախար իմ մոտով,
Յեղնիկ քնքշածին,
Սիրտս թե՛ կարոտով
Այնպես վառեցիր:

Շորորացիր շեկ արտում
Քանց կաքավ մի թուխ,
Կրակ զցիր իմ սրտում,
Ա՛խ, քուն թե՛ արթուն:

Զուլալ ես մութ լուսին
Քաղ կանչեցիր զուլալ.
Մառաղ ծածիդ հուսին,
Աչքերիդ եղ լալ:

Ես գիշեր լուսնակ ե,
Ազրյուրի մոտ արի,
Զրույց անենք մի քիչ
Նստած են լուս/քարին:

Արի... կգամ, աղիկ...

Արի... կսպասեմ.

Բան պիտ առեմ, արի,

Բայց ինչ պիտ առեմ...

ԳԱՐՆԱՆ ՄԻ ՈՐ...

S-ին

1

Գարնան մի ուր,
Ձնհալ եր յերբ,
Առուն վուր
Յերգում եր յերգ,
Մենք զաշտ յելանք,
Ձեփուռ ու զնվ,
Դաշտը, է, լայն՝
Մինչ հորիզոն...

2

Յերկինքը բիւ —
Մանկան արցունք...
Մի արագիւ
Յերկնի բացում
Թեում եր զոճ՝
Շյուղը կացին,
Արբած յերգով
Այգարացի...

3

Կանաչ եր ջինջ
Սարում, արտում.
Արտի միջին,
Թուխ մի արտում
Յերգում եր խոր
Պայծառ մի յերգ
Գարնան մի ուր.
Ձնհալ եր յերբ...

Մտանք կրկին քաղաք,
Քաղաքն Առաջնորդի...
— Խնդու թյան աղաղակ,
Ջնդա, յեկիւր, հորդիւր...

ԵՐԱՅՈՒՆ

Թողինք այնտեղ բազում
Շատրվաններ: Տեսանք,
Ինչպես բիւ լերագում,
Հզօր Աամսոն մի սառն:

Շիկահեր մի աղջիկ
Ուրախ արցունք թափեց
Իր աչքերից ջինջ
Բալթիականի ափին:

Մեզի մեջ կապարե
Տեսանք մեզ ակնարկող
Ամբողջն այն անառիկ
Իր լեզենդար փառքով...

Հանկարծ ծովի բացից,
Վերպես կարոտ յերգի,
Լույսերը ժպտացին
Միդապատ յեկերջից:

* * *

Կհանդիպենք կրկին մենք դեմ առ դեմ,
Յեվ կթվա վայրկյանն այնքան անդին,
Ու կհորդի սիրտը մեր բոլոր խանդից,
Յերբ հանդիպենք իրար մենք դեմ առ դեմ...

Յեվ վայրկյանն այդ լուռ և կհիշենք ջինջ,
Թեկուզ անցնեն անդարձ անթիվ օրեր
Յեվ սլանան հուժկու, յերկաթահունչ,
Ու հաջորդեն օրեր նորեն, նորեն...

Յեվ օրերի վաղըում այնքան թեթև,
Յերբ հանդիպենք իրար կրկին, կրկին —
Կպատմենք մենք իրար կյանքի զրթից
Անթիվ հեքիաթներ յերկաթաթև...

ԲԼՈՎՆՈՏ

* * *

Ախր, չես կուգիցի շատ՝
Յերգս լիներ
Թուխ աշնան պես ծխտ,
Շուայլ լիներ:

Յե՛վ զիշերվա պես բիւ,
Որվա պես թուխ,
Ազրյուրի պես անբիծ
Յե՛վ ինքնարուզի...

* * *

Վազում եր խենթ գաշտում մի ձի
Վստկեսմբակ ու վստկերաշ.

Յնցում փոշու ամպի միջից
Գլուխն իր սեզ, վորպես հրաշք...

Հասավ աղբյուրն ախանակիտ,
Դեմն ավազան ժայռոտ ու քայ.
Շողշողացին աչքերն հակինթ,
Կանգնեց հպարտ, հպարտ ցնծաց:

Ու կրակված ուռնգերը լայն
Ոորասուզեց ջրում հստակ,
Մինչ լույս-ջրի հատակը այն
Բեկրեկվում եր վորպես սուտակ:

Վեր բարձրացրեց գլուխը իր
Ու խրխնջաց արծաթաձալն.
Շուրթից կախվեց յերկրուսե ծիր,
Շողաց ախտեղ բյուր ծիածան...

Դուքեց սմբակն իր վստկեղեն
Ու սլացավ գաշտի բացով...
.....
.....

Այդպես պոետն է յերազել
Գտնել հույզի աղբյուրը ծով:

* * *

Յերեկոներ կան աստղարիւր,
Առավոտներ՝ մանկահայաց,
Ովկիանի պես անեղը ու բիւ,
Ովկիանի պես արծակ ու րաց:

Սիրտն ել, սիրտն ել այդպես ահա, —
Յերեկոյի պես աստղարիւր,
Առավոտի՝ մանկահայաց,
Ովկիանի պես անեղը ու բիւ,
Ովկիանի պես արծակ ու րաց, —
Բյուր հմայքներ ունի կահած...

Ա. ՊՈԻՇԿԻՆ

Փառք նրան, ով վարպետ նավավարն է
Իր նավի և զիտե ծանծաղու տը...
Ո՛վ հանճար, քո նախն ևս դու վարել,
Յեւ, անա, ճեղքելով դարերը,
Դեպ մեզ ևս գալիս, զեպ արեր,
Թողնելով յետեւում դաժան մութը:

Թող պայծառ, կուռ յերգերը քո,
Բո յերգերը՝ հրաշունչ, բոցե,
Վորոնց մեր արեւն և վոսկեղոծել,
Բարախեն մի նոր, չեղած հեվքով:

ՊՈՒՇԿԻՆ-ՆԵՅ

(Նմանություն Սելվինսկու)

Я помню чудное мгновение...

А. ПУШКИН

Յես հիշում եմ, ա՛յ, այն պահը հրաշալի,
Յերբ իմ առաջ հայտնվեցիր վե՛հ ու անճառ:
Վորպես տեսիլք փութանցիկ մի, վորպես գալիք,
Վորպես մաքուր գեղեցկության հզոր հանճար...
Դու իմ առաջ հայտնվեցիր վե՛հ ու անճառ,
Վորպես մաքուր գեղեցկություն... Հղ՛՛ն հանճար:
Յես հիշում եմ, ա՛յ, այն պահը հրաշալի,
Վորպես տեսիլք փութանցիկ մի, վորպես գալիք...
Վորպես տեսիլք փութանցիկ մի... Վորպես գալիք՝
Յես հիշում եմ.— հայտնվեցիր վե՛հ ու անճառ,
Ինչպես մաքուր գեղեցկության հզոր հանճար,
Ինչպես գալիք... Ո՛հ, այն պահը հրաշալի...

Հ. Թ.

Ձի կլանի դաժան լետան՝
Մոռացության սուղ դեպը...
Պայծառ անունը քո.
Կմաս հար դու ամբասիր,
Վարպետության, յերգի Մասիս,
Քո կախարդիչ յերգով...

Կմաս դու մեր սրտերում,
Մեր գրքերում, մեր յերգերում,
Վորպես փառքի պսակ:
Հատակության մը քո հմայիչ
Յե՛վ խորության մը գերող ու ջինջ,
Պայծառանուն գուսան...

ՊՈՒՇԿԻՆ ՅԵՎ. ԲԵՂԻՆՍԿԻ

(Մի «Քննադատի» կարծիք)

Պոռչկինը... Բ, նա բազկացած է
Հոմերոսից ու Շեքսպիրից մեծ.
Զուտ Գյոթեից է մնացածը:—
Դրանով էլ Պոռչկինը հասել է մեզ...

Նույն բանն է նաև մեր հարգելի
Վիսարիոնի հետ կրակոտ պարզ.
— Չէ՞ նա վերցրել է «այս» Հեգելից,
Ֆիխտեյից՝ «այս ինչ»՝ Շիլինգից՝ «այս»...

ՊՈՒՇԿԻՆԻ ՅԵՎ. ԲԵՂԻՆՍԿՈՒ

«Քննադատ»-ին

Ո՛ր, ահալոր է մտքի խեղճութունը,
Բայց ավելի ևս ահալոր է,
Յերբ խեղճ, թշվառ Պյերրոն անվերջ ճգնում է
Տգիտությունն յուր բեղմնավորել...

N. N.

Քո խոհերին պայծառ աշուեն ե թեաժուս
 Ժպիտներով պաժառ, վոսկեղանդուր,
 Յեվ իմաստուն յերդի բողբոջներն են աճում
 Սրտիդ անապական, կապտալազուր հանդում
 Յեվ դու բարձրանում ես կրկին անգամ
 Յերգերիդ բերքը հնձելու...
 Ու բերքառատ աշուեն ե, վոսկի հագած,
 Քո դեմ փովում բերքով վոսկեբեղուն...



8 ԱՆԿ

ԳՐՈՂԻ ՅԵՐԳԵՐ

1. Յերկու տոնեա	9
2. Յերգ առաջնորդին	11
3. Յերգ նախանձր մասին	13
4. Սահմանապահը	19
5. Յես միշտ յերգել եմ...	23
6. Մահմական խոսքեր	23
7. Հրաժեշտի պահը	24
8. Զոգայել	26
9. Ո՛ր, յես հիշում եմ դեռ...	28

ՅԵՐԳԵՐ

10. Քեզ	31
11. Յերգ իմ մասին	33
12. Լիրիկական	34
13. Թեալոր յերգ	36
14. Սերեկադ	38
15. Առաջին ձյունը	41
16. Յերգ աշնան	43
17. Աշուն	43
18. Յերգ աղժիկների մասին	45
19. Յերգ տառապեթյան	47
20. Գարնանամուտ	48
21. Աշնանային յերգ	50
22. Աշնանային արե	53
23. Դու փախար իմ մտտով...	53
24. Գարնան մի որ...	54
25. Եղսպրոս	56
26. Կանգնեալ եմ կրկին...	58

ՔԱՆՈՒՆՈՑ

27. Այն, յիս կուղեյի շատ...	61
28. Վաղուս եր խենթ...	62
29. Յերեկոնեք կան աստղաբեր...	64
30 Ա. Գուգլին	66
31 Գուգլին Նեյ	67
32. Հ. Բ.	68
33 Գուգլին և Բեյլինսկի	69
34 Գուգլին և Բեյլինսկի «Բնադասին»...	
36. N. N.	

Տեխ. խմբադիր՝ Ստ. Ա. Թաւնյան
Սրբազրիչ՝ Գար. Հակոբյան

Գլավիտի լիազոր՝ Ա.—4049 Հրատ. № 4649

Գատվեր 498. Տիրած 3000

Թ. ղԲ 72X105 Տպագր. 41¹/₂ մամ.

Մեկ մամ. 25600 նշան

Հանձնված է արտադրության 25-ին մայիսի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար՝ 4 հուլիսի 1938 թ.

Գեոհրապ. և տպարան, Յերեան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0350161

